

Սև լիճը կամ Իշխանա լիճը, որ նաև Սրբոց սարի ծովակ է կոչվում, 2021թ. մայիսի 12-ից ադրբեջանական գերության մեջ է: Թուրք-ազերի ասկյարները Սյունիքից հեռանալու մտադրություն դեռևս չունեն, իսկ հայոց պետական այրերը հավաստիացնում են, որ օկուպանտները կհեռանան մեր տնից...

Հիմնադրվել է 2011թ.
24 հունիսի 2021թ.
№ 12 (554)

ՀԻՄՆԱԿԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՐ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ՂԴԱՍ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
2 1 0 1 2 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Պատմության բառուղիներով մենք քայլել ենք երկար՝ Անդել, ցաքուցրիվ, անգաղափար...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



80 տարի առաջ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը.

19 064 սյունեցի մասնակցեց այդ պատերազմին

Հայ ժողովրդի համար 1941-45 թթ. Մեծ հայրենականը պատերազմ չէր միայն ընդհանուր հայենիքի պաշտպանության, ֆաշիստական վտանգը վերացնելու համար:

Պատերազմի ամբողջ ընթացքում պահպանվում էր Հայաստանի վրա թուրքական հարձակման վտանգը, որը կարող էր ծանր հետեանքներ ունենալ Մեծ եղեռնի հարվածներից դեռևս ուշքի չեկած հայ ժողովրդի համար:

Այդ էր պատճառը, որ ամբողջ հայ ժողովուրդը, նաև սփյուռքահայությունն արժանի ներդրում ունեցան ֆաշիստական Գերմանիայի ջախջախման գործում:

Մոտ 600 հազար հայորդի մասնակցեց այդ պատերազմին...

Ռազմի դաշտում ընկած ավելի քան 200 հազար հայորդիներից 8 732-ը Սյունյաց աշխարհի զավակներ էին: Եվ նրանց մենք պահեցինք մեր գրկում՝ իբրև հուշարձան, իբրև Անհայտ գինվոր, իբրև հաղթանակի հուշաքար, իբրև հպարտություն: Եվ մարզի տարբեր վայրերում երախտապարտ մեդալները, կապակցիները, գործիքները ու սիսիանցիները բարձրագրին 118 հուշարձան նրանց հիշատակը հավերժացնելու համար:

Տասնմեկ սյունեցի արժանացան Խորհրդային Միության հերոսի, մեկը՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Սյունիքը տվեց բազմաթիվ նշանավոր գործարամաստարներ, բաղաշնչատողներ, բժիշկներ, զինագործներ, պարտիզանական շարժման ղեկավարներ:

Խոնարհվենք մեր հերոս հայրերի, պապերի հիշատակի առջև:

Այցելենք Մեծ հայրենականում զոհված մեր հայրենակիցների հիշատակը հավերժացնող հուշարձաններ և ծաղիկներ խոնարհենք:

Չմոռանալ՝ նրանց օրինակով էին մեր ավագ ընկերներն ու եղբայրները սիրանքներ գործում Արցախյան առաջին և Ապրիլյան հերոսամարտերում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին նրանց օրինակով ճակատ մեկնեցին ու հանուն հայրենիքի նահատակվեցին հազարավոր հայորդիներ, որոնց մի մասը նույնիսկ անշիրիմ մնաց:

Նրանց հիշատակն է, որ այսօր մեզ վերադարձի հրավեր է անում դեպի մեզ...

Հիշենք, խոնարհվենք, բայց եւ սգավոր, ծնկաչոք վիճակից դուրս գալու ջանքեր գործադրենք...

Մենք դեռ ազգային երազանքներ ունենք, Արցախյան երազանք ունենք, հայոց արժանապատիվ պետություն ունենալու երազանք ունենք, իրար սիրելու եւ փոխադարձ ատելությունն ու վրեժխնդրությունը մեզանից վանելու, հայոց տունը շենացնելու, Սյունյաց սրբազան հողն անարատ պահելու երազանք ունենք...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՍԱՆՅԱՆ

Հունիսի 20-ին Սյունիքում հաղթեց Նիկոլ Փաշինյանի գլխավորած քաղաքական ուժը. արդյո՞ք դրան չնպաստեց Ռոբերտ Զոչարյանը՝ դաշնակցելով «Վերածնվող Հայաստան» հնարանքի հետ

Ըստ ԿԸՀ տեղեկատվության՝ ընտրությունների ընդհանուր թիվը մարզում 99 054 է: Քվեարկությանը մասնակցել է 59 617 քաղաքացի: 214 քվեաթերթիկ անվավեր է ճանաչվել:

Ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու քաղաքական դաշինքները ստացել են հետևյալ քանակությամբ ձայներ.

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն – 31 841 (53.66%),
- «Հայաստան» դաշինք – 16 142 (27.20%),
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն – 2 280 (3.84%),
- «Պատիվ ունեմ» դաշինք – 1 735 (2.92%),
- Ազատական կուսակցություն – 1 540 (2.60 %),
- «Հանրապետություն» կուսակցություն – 1 213 (2.04 %),
- «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն - 592 (1.0%): Սյունյաց կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները ստացել են մեկ տոկոսից պակաս քվեներ:

Հ.Գ. Տեղեկությունները նախնական են:

Խորհրդարանի արտահերթ ընտրություն. Սյունիքում ստեղծված էին անհրաժեշտ պայմաններ քվեարկության համար

2021 թ. հունիսի 20-ին մարզում ընտրելու իրավունք ունեցողների թիվը 107742 է, այդ թվում 57242-ը թիվ 34 ընտրատարածքում, 50500-ը՝ թիվ 35 ընտրատարածքում (ավելի ուշ այդ թվերի մեջ փոփոխություններ մտցվեցին):

Աժ արտահերթ ընտրության կազմակերպման եւ անցկացման նպատակով մարզում կազմավորվել էր երկու տարածքային ընտ-

րական հանձնաժողով՝ N 34, որն ընդգրկում էր Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջանները (հանձնաժողովի նախագահ՝ Սլավիկ Դադաչյան, հանձնաժողովի քարտուղար՝ Արտյոմ Անդրեասյան, նստավայրը՝ ք. Գորիս) եւ N 35, որն ընդգրկում էր Կապանի եւ Մեղրու տարածաշրջանները (հանձնաժողովի նախագահ՝ Սերգեյ Սարգսյան, հանձնաժողովի քարտուղար՝ Ռամելա Հակոբյան, նստավայրը՝ ք. Կապան):


Մարզում ստեղծվել էր 151 ընտրական տե-

ղամաս, այդ թվում 75-ը Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջաններում (N 34 ընտրական տարածք), 76-ը՝ Կապանի եւ Մեղրու տարածաշրջաններում (N 35 ընտրական տարածք):

Քվեարկության ընթացքը տեսանկարահանվել է թվով 51 ընտրական տեղամասում (22-ը՝ N 34 ընտրական տարածքում, 29-ը՝ N 35 ընտրական տարածքում). դրանք՝ հազարից ավելի ընտրող ունեցող տեղամասերն էին:

”

Աժ արտահերթ ընտրության արդյունքները Հայաստանի Հանրապետությունում



«Թուրքիան և Ադրբեջանը կկառուցեն Նոր Ղարաբաղ».

Էրդողանը խոսել է Շուշիի, «Չանգեզուրի միջանցքի», Երևանի հետ հարաբերությունների կարգավորման հեռանկարների մասին

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ասել է, որ Անկարան և Բաքուն համատեղ ջանքերով կվերականգնեն Լեռնային Ղարաբաղը, հայտնում է ռուսական vz.ru լրատվականը:

«Երեկ մենք շրջեցինք Լեռնային Ղարաբաղում և տեսանք, թե 30 տարվա հակամարտությունից հետո ինչպիսի ավերածություններ են եղել, սակայն Թուրքիան և Ադրբեջանը միասին կվերակառուցեն ամեն ինչ, կկառուցեն Նոր Ղարաբաղ», - ասել է Էրդողանը և հավելել, որ հակամարտության կարգավորումը համագործակցության հնարավորություններ է ստեղծում, այդ թվում՝ Հայաստանի համար:

Նա նշել է, որ Անկարան իր բոլոր հնարավորություններով Բաքվի կողքին է և այդպես է լինելու նաև «վաղը»:

Minval.az-ի փոխանցմամբ՝ Միլլի մեջլիսում իր ելույթի ընթացքում Էրդողանը հույս է հայտնել, որ Շուշին կդառնա թյուրքական աշխարհի մշակութային մայրաքաղաքը:

«Այս քաղաքում ապրել են մեծ կոնկրոցիտոր Ուզեիր Հաջիրեյլին, Բյույյուլը, Նայթալան և այլ բանաստեղծներ: Այսօր Շուշան (Շուշի) վերակենդանանում է և այս հարցում Շուշան (Շուշի) Ադրբեջանի մշակութային մայրաքաղաք հայտարարելը հստակ ուղերձ է աշխարհին», - ասել է Թուրքիայի նախագահն ու նշել, որ հաջորդ տարի այն թյուրքական աշխարհի մշակութային մայրաքաղաք դարձնելը պատիվ կլինի իրենց համար:

Բացի այդ, նա անդրադարձել է այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքին»՝ նշելով, որ Նախիջևանի և Բաքվի միջև այդ միջանցքի նշանակությունը դժվար է գերազանահատել: Ըստ նրա՝ այս տրանսպորտային միջանցքը կնպաստի ողջ տարածաշրջանի բարեկեցությանը և զարգացմանը:

Նա խոսել է նաև Անկարայի և Երևանի միջև հարաբերությունների կարգավորման հեռանկարների մասին:

«Հենց վերանան Հայաստանի ու Ադրբեջանի խնդիրները, Թուրքիան կարող է որոշակի քայլեր ձեռնարկել Երևանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ», - ասել է Էրդողանը:

Հիշեցնենք, որ Թուրքիայի ու Ադրբեջանի նախագահներն այցելել են Շուշի:

Արցախի ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել այդ առնչությամբ: Հայտարարությունում ասվում է. «Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ու նրա ընտանիքի ուղեկցությամբ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և նրա ընտանիքի անդամների այցը Արցախի պատմական մայրաքաղաք Շուշի, որը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ավերվել է 1920 և 2020 թվականներին, միջազգային իրավունքի կոպտագույն խախտման, մարդատյացության, ցեղասպան ու անարեղական քաղաքականության վառ դրսևորում է:

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը խստորեն դատապարտում է նման այցերը Արցախի օկուպացված տարածքներ՝ դրանք դիտարկելով որպես ստորանք, ծավալապաշտական և ծայրահեղական ծրագրերի շարունակման հայտ»:

16.06.2021



Նոր Աժ-ում կլինի 107 պատգամավոր. ԶՊ-ն կունենա 71 մանդատ, «Հայաստան» դաշինքը՝ 29, «Պատիվ ունենմ»-ը՝ 7 մանդատ

Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների արդյունքներով նոր խորհրդարանում կլինեն երեք քաղաքական ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիրը», «Հայաստան» դաշինքը եւ «Պատիվ ունենմ» դաշինքը: Մանդատները կբաշխվեն հետևյալ կերպ՝

- «Քաղաքացիական պայմանագիր» - 71 մանդատ,
 - «Հայաստան» դաշինք - 29 մանդատ,
 - «Պատիվ ունենմ» դաշինք - 7 մանդատ:
- 4 ամենամեծ ազգային փոքրամասնությունները 4 մանդատից երեքը բաժին են հասնում «Քաղաքացիական պայմանագիրին»,

մեկը՝ «Հայաստան» դաշինքին եւ նրա մանդատները դառնում են 27:

Բացի դրանից, «Հայաստան» դաշինքը ստանում է լրացուցիչ 2 մանդատ, որպեսզի խորհրդարանում ընդդիմության մանդատները 1/3-ից պակաս չլինեն:

||

«Դուք գիտեք, որ ռուսական սահմանային կետեր արդեն կան Սյունիքում՝ հայ-ադրբեջանական սահմանի խնդրահարույց հատվածներում».

Հայաստանում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկին

«Վերածնվող Հայաստանը» մերժվեց իր իսկ բնօրրանում՝ Սյունիքում

Կապան համայնքում երկու գլխավոր մրցակցի ուժերի հարաբերակցությունն այլ պատկեր կունենար կամ (առնվազն) հավասար կլիներ, եթե զինվորականները չմասնակցեին քվեարկությանը:

Համայնքում Ազգային ժողովի արտահերթ ընտրությանը մասնակցելու իրավունք ունեն 35 947 ընտրող:

Երանցից քվեարկությանը մասնակցել է 22 078 քաղաքացի, 78 քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր:

Քվեարկության արդյունքում առավել շատ ձայն են ստացել հետեւյալ քաղաքական ուժերը՝

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 10 685 քվե,
- «Հայաստան» դաշինք - 6 338 քվե,
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն - 1 209 քվե,
- Ազատական կուսակցություն - 816 քվե,
- «Հանրապետություն» կուսակցություն - 533 քվե,
- «Պատիվ ունեն» դաշինք - 351 քվե,
- «Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն - 197 քվե:

Վերոնշյալ թվերը, սակայն, ամբողջապես եւ օբյեկտիվորեն չեն արտացոլում ուժերի հարաբերակցությունը Կապան համայնքում:

Կապան համայնքի մի շարք տեղամասերում քվեարկություն են իրականացրել հազարավոր զինվորականներ, ինչը որոշակի անդրադարձ է ունեցել քվեարկության վերջնական արդյունքների վրա:

«Վերածնվող Հայաստանը» մերժվեց իր իսկ բնօրրանում՝ Քաջարան համայնքում:

Աժ արտահերթ ընտրությունը 2021 թ. հունիսի 20-ին կազմակերպելու համար Քաջարան համայնքում ձեւավորվել էր 8 ընտրական տեղամաս՝ 35/53-ից մինչեւ 35/60 (Ներառյալ):

Ընտրողների ընդհանուր թիվը 6 542 էր: Աժ արտահերթ ընտրության քվեարկությանը մասնակցել է 5 120 հոգի. 20 քվեաթերթիկ անվավեր է համարվել:

Առավել շատ ձայներ են ստացել հետեւյալ քաղաքական ուժերը՝

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 1976 քվե,
- «Հայաստան» դաշինք - 2 640 քվե,
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն - 57 քվե,
- Ազատական կուսակցություն - 62 քվե,
- «Հանրապետություն» կուսակցություն - 144 քվե:

Հիշեցնենք՝ Քաջարան համայնքի մեջ մտնում են Քաջարան քաղաքը եւ հետեւյալ գյուղական բնակավայրերը՝ Քաջարանց, Լեռնաձոր, Փոկխորուտ, Կաթնառատ, Չագիկավան, Բարիկավան, Անդրկավան, Չոփուտ, Գեղավանք, Գեղի, Գետիչեն, Լոր Աստղաբերդ, Ոչեթի, Աչեբաշ, Կարո, Լերբին Գիրաթաղ, Վերին Գիրաթաղ, Կիցբե:

Սիսիան համայնքը նույնպես ձեռք էր բերել «Վերածնվող Հայաստան» նորահանր կուսակցության բերդաքաղաքի համբավ...

2021 թ. հունիսի 20-ի քվեարկությունը ցույց տվեց սակայն, որ դա ընդամենը պատրանք է, ուղեղային սուրմոք...

25 139 ընտրող, 14 002 մասնակց...
Եվ «Հայաստան» դաշինքը, որում ընդգրկված էր նաեւ այսպես կոչված «Վերածնվող

Հայաստանը», ստացավ ընդամենը 2 946 ձայն:

Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, մինչդեռ, ստացավ 8 373 ձայն:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը տասը տարի շարունակ (շնորհիվ երջանկահիշատակ Ադաթի Հակոբջանյանի) գլխավոր քաղաքական ուժն էր Սիսիանում, գրեթե դուրս մղվեց այդ համայնքից՝ ստանալով 372 ձայն:

Ուրիշ կուսակցություններ էլ Սիսիանում կողմակիցներ ունեցան՝ 254 ընտրող քվեարկեց հօգուտ Ազատական կուսակցության, 157 հոգի՝ հօգուտ «Հանրապետություն» կուսակցության, 135 հոգի՝ հօգուտ «Հայ ազգային կոնգրես» կուսակցության:

Համայնքի մեջ մտնում են Սիսիան եւ Դաստակերտ քաղաքները, ինչպես եւ հետեւյալ գյուղական բնակավայրերը՝ Դարբաս, Շամբ, Ախլաթյան, Թանահատ, Շաբի, Աղիտու, Թասիկ, Շենաթաղ, Ազգեղակոթ, Իշխանասար, Որոտնավան, Աշոտավան, Լծեն, Սպիվարդ, Արևիս, Լոր, Վաղատին, Բալաք, Չագավան, Տոլորս, Բունիս, Մուգք, Տրուկիք, Բունակոթ, Լծեի, Ցղունի, Գետաթաղ, Լորավան, Ույծ, Շաղատ:

Կապան համայնքի մի շարք տեղամասերում քվեարկություն են իրականացրել հազարավոր զինվորականներ, ինչը որոշակի անդրադարձ է ունեցել քվեարկության վերջնական արդյունքների վրա:

Մերժ Սարգսյանի նախնիների գյուղը՝ Տեղը, քվեարկեց հօգուտ Նիկոլ Փաշինյանի եւ Ռոբերտ Զոչայրյանի:

Տեղ խոշորացված համայնքի գյուղերում, 2021 թ. հունիսի 20-ի ընտրությունը կազմակերպելու համար, ձեւավորվել էին մեկական ընտրական տեղամասեր՝ Տեղ (34/68), Կորնիձոր (34/69), Խնածախ (34/70), Քարաշեն (34/71), Խոզավար (34/72), Վաղատուր (34/73), Արավուս (34/74): Ընտրական հաշվով՝ յոթ տեղամաս:

Համայնքի ընտրողների ընդհանուր թիվը 4 085 էր:

Հունիսի 20-ի քվեարկությանը մասնակցել է 2 419 ընտրող:

Համայնքի ընտրողներն իրենց քվեն առավելապես տվել են հետեւյալ քաղաքական ուժերին՝

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 1 448 քվե,
- «Հայաստան» դաշինք - 496 քվե,
- «Պատիվ ունեն» դաշինք - 252 քվե:

Խնածախում էլ, ի դեպ, ավելի շատ քվեներ տրվեց «Քաղաքացիական պայմանագրին», քան այդ գյուղում նշանակալից ավանդ ունեցած, մեծահամբավ գորապետ եւ համագյուղացի Սեյրան Օհանյանին (Նա «Հայաստան» դաշինքի նախընտրական ցուցակում էր):

Գորայք խոշորացված համայնքը (Գորայք, Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան) մինչեւ համապետական ընտրությունները նույնպես, առիթ լինելու դեպքում, արտահայտում էր իր նվիրվածությունը Նիկոլ Փաշինյանի գլխավորած քաղաքական թիմին:

Այդ նվիրվածությունը դրսևորվեց նաեւ 2021 թ. հունիսի 20-ին:
Լշված գյուղերում կազմավորված չորս



ընտրական տեղամասում իրենց քաղաքացիական պարտքը պետք է կատարեին համայնքի՝ ընտրելու իրավունք ունեցող 1 435 քաղաքացի:

Սակայն քվեարկությանը մասնակցեց 875 ընտրող:

Երանք հիմնականում վստահեցին հետեւյալ քաղաքական ուժերին՝ «Քաղաքացիական

կան շարժում» կուսակցությանը (273 քվե), «Հանրապետություն» կուսակցությանը (220 քվե), «Լուսավոր Հայաստան» կուսակցությանը (205 քվե) եւ «Հայաստանի ազգային կոնգրես» կուսակցությանը (98 քվե):

Մեղրին վճռականորեն «ոչ» ասաց Մխոյիս...

2021 թ. հունիսի 20-ի Աժ արտահերթ ընտրությունն անցկացնելու համար Մեղրի համայնքում ձեւավորվել էր 16 ընտրական տեղամաս՝ 35/61-ից մինչեւ 35/76 (Ներառյալ): Համայնքի ընտրողների թիվն էր՝ 9998:

Քվեարկությանը մասնակցել է 6607 ընտրող, անվավեր քվեաթերթիկ՝ 13:

Քվեարկության արդյունքում առավել շատ ձայն են ստացել հետեւյալ քաղաքական ուժերը՝

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 3540 քվե,
- «Հայաստան» դաշինք - 707 քվե,
- «Ազատական» կուսակցություն - 254 քվե,
- «Հանրապետություն» կուսակցություն - 205 քվե,
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն - 110 քվե,
- «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն - 64 քվե:

Հիշեցնենք՝ համայնքում, Մեղրի եւ Ազարակ քաղաքներից բացի, մտնում են հետեւյալ գյուղական բնակավայրերը՝ Ալվանք, Այգեծոր, Գուրեմնիս, Թխկուտ, Լիճք, Կարճեան, Լռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն:

Տարբեւ համայնքը նույնպես ճանապարհ չունի գնալու «Վերածնվող Հայաստանի» հետ...

Տարբեւ համայնքում ստեղծվել էր ութ ընտրական տեղամաս՝ 34/60-ից մինչեւ 34/67-ը Ներառյալ:

Համայնքի ութ գյուղում Շինուհայր, Տարբեւ, Խոտ, Հարժիս, Հալիձոր, Սվարանց, Տանձատախ, Քաշունի, հաշվառված էր 4 491 ընտրող:

Երանցից հունիսի 20-ի քվեարկությանը մասնակցել է 2 516 ընտրող, որից 1 546 հոգի քվեարկել է հօգուտ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, 652-ը՝ հօգուտ «Հայաստան» դաշինքի:

«Պատիվ ունեն» դաշինքը եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը նույնպես կողմակիցներ ունեցան այդ գյուղերում՝ 56 եւ 53:
**

ՀՀ պաշտպանության նախարարությունից տեղեկացնում են, որ հունիսի 21-ին մեկնարկել է 2021թ. ամառային զորակոչը:

Արդյո՞ք 2020-ի նոյեմբերի 9-ից հետո Հայաստանին համակած քաղաքական ճգնաժամը կհաղթահարվի ԱԺ արտահերթ ընտրությունից հետո

Այս ընտրությունները ոչ լեգիտիմ են և այս արդյունքներով ԱԺ-ն չի արտացոլում ուժերի իրական հարաբերակցությունը. «Հայաստան» դաշինքը դիմելու է ՄԴ

ՀԱՅԱՍՏԱՆ

«Հայաստան» դաշինքը հայտարարություն է տարածել, որում անդրադառնում է ԱԺ արտահերթ ընտրություններին: Հայտարարությունում ասվում է.

«Հայաստան» դաշինքն իր երախտագիտությունն է հայտնում 2021թ. հունիսի 20-ի ՀՀ ԱԺ ընտրություններում դաշինքին աջակցած և իր օգտին քվեարկած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին: Այն վստահություն է ներշնչում, որ երկրի մասին մտահոգ մեր հայրուր հազարավոր քաղաքացիներ ոչ միայն տեսան հայ ժողովրդի առջև ծառայած գոյութենական սպառնալիքները, այլ նաև իրենց հավանությունը տվեցին «Հայաստան» դաշինքի կողմից առաջարկած լուծումներին:

«Հայաստան» դաշինքը վերահաստատում է իր մոտեցումը, որ խորհրդարանական ընտրությունների արդյունքները խիստ վիճահարույց են և վստահություն չեն ներշնչում: Մենք ունենք լուրջ հիմքեր, այս ընտրությունները ոչ լեգիտիմ համարելու և հայտարարելու, որ այսպիսի արդյունքներով ԱԺ-ն չի արտացոլում ուժերի իրական հարաբերակցությունը: Մեր դիտարկումները և դաշինքի նախընտրական շտաբներից եկած տեղեկատվությունը փաստում են, որ խախտումները սկսվել են ընտրության օրվանից շատ ավելի վաղ: Իսկ բուն ընտրության օրը բազմաթիվ տեղամասերից մեր վստահված անձանց ահազանգերի նախնական ամփոփումը վկայում է, որ խոսքը գնում է ընտ-

րության արդյունքների համակարգված և նախապես պլանավորված կեղծարարության մասին:

Մասնավորապես.
1. Ձևավորվեց ոչ մրցակցային ընտրական միջավայր, գործող իշխանության կողմից զանգվածաբար օգտագործվեցին վարչական ռեսուրսները, ձեռնարկվեցին ընտրական ահաբեկման առերևույթ գործողություններ:

2. Ընտրահաշվարկը սկսելուց անց բազմաթիվ տեղամասերում տեղի ունեցան էլեկտրաէներգիայի անջատումներ: Խոսքը գնում է մարզերի ամբողջական, առանձին համայնքների մասին՝ Արմավիր, Լոռի, Շիրակ, Արագածոտն և այլն:

3. Բազմաթիվ տեղամասերում արձանագրվեցին այդ բնակավայրերին օտար մեծ թվով քաղաքացիների առկայություն և քվեարկություն, որը հիմք է տալիս ենթադրելու, որ գործել է շրջիկ մոբիլ խմբերի կեղծարարության համակարգ:

4. Անհերքելի իրողություն է բանակի անթաքույց ուղղորդված քվեարկությունը, որն իշխանության համար ապահովել է մեծաքանակ ձայներ:

5. Առկա է խորը կասկած, որ գործել է ընտրությունների ծրագրային ապահովման կեղծարարություն, որն ի սկզբանե բացառում է օբյեկտիվ արդյունքների հնարավորությունը:

6. Առանձին համայնքներում իշխանության կողմից բողոքված ընտրակաշառքի դեպքերի մասին ահազանգեր կան:

«Հայաստան» դաշինքն օգտագործելու է ընտրության արդյունքները վիճարկելու ողջ գործիքակազմը՝ այդ թվում դիմելու է Սահմանադրական դատարան: Դաշինքը սկսում է քաղաքական կոնսուլտացիաներ ընտրություններին մասնակցած այլ ուժերի հետ՝ միասնական ՄԴ դիմելու հնարավորությունը բնարկելու համար»:

21.06.2021



Կրեմլը տեսնում է Փաշինյանի կուսակցության վստահ հաղթանակն ընտրություններում

Կրեմլը ցանկանում է, որ Հայաստանի խորհրդարանական ընտրություններում ժողովրդի որոշումն օգնի երկրին դուրս գալ կայուն զարգացման հետագիծ եւ հաղթահարել դժվարությունները: Այս մասին ասել է ՌԴ դեկավարի մամուլի բարտուղար Դմիտրի Պեսկովը, հայտնում է ՏԱՍՍ-ը:

Նա պատասխանել է հարցերին, թե ինչպես է Մոսկվան գնահատում Հայաստանի ընտրությունների արդյունքները եւ ինչպիսին է նրա տրամադրվածությունը Երեւանի հետ փոխգործակցության հարցում: Պեսկովը հավաստիացրել է, որ Կրեմլն ուշադիր հետեւում է Հայաստանից ստացվող տեղեկատվությանը:

«Իհարկե, մենք կցանկանայինք, որ հայ ժողովրդի այս ընտրությունն օգներ հաղթահարել երկրում առկա դժվարությունները եւ

դուրս գալ կայուն զարգացման հետագիծ: Եռակողմ համաձայնագրերի իրականացման միջոցով ներառյալ ձեռք են բերվել եւ ստորագրվել Ռուսաստանի Նախագահի [Վլադիմիր Պուտինի] անմիջական ներգրավման ժամանակ», - ասաց Պեսկովը:

Մոսկվան ուղղումում է Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ստացված տեղեկատվությունը, որ տեղի են ունեցել խորհրդարանական ընտրություններ, հավելեց նա:

«Մենք տեսնում ենք, որ Վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի կուսակցությունը համոզիչ հաղթանակ տարավ: Մենք շտրկավորում ենք հայ ժողովրդին ընտրության կապակցությամբ», - կշեց Պեսկովը՝ ավելացնելով, որ Հայաստանը Ռուսաստանի ամենամոտ դաշնակիցն ու գործընկերն է:

Պայքարը շարունակվելու է. «Պատիվ ունեմ»-ը հայտարարություն է տարածել



ԵՐԵՎԱՆ, 21 հունիսի - Sputnik. «Պատիվ ունեմ» դաշինքը հայտարարություն է տարածել, որտեղ նշում է, որ այս արդյունքները ոչ թե լուրջ են թունելի վերջում, այլ, ցավոք՝ խավարի մի սոր թանձրացում:

«Հայտարարում ենք, որ ստացված արդյունքները չենք ճանաչում որպես Արցախյան վերջին պատերազմի տարածքային և մարդկային կորուստների լեգիտիմացում, որպես աշխարհաքաղաքական առևտրում Հայաստանի մանրադրամի կարգավիճակի ամրագրում, որպես ազգային պարտություն ստահող և անբարո իրականությանը», - ասված է հայտարարության մեջ:

Նշվում է, որ ընտրությունները չդարձան քաղաքական գործընթաց, չվերածվեցին Հայաստանի անդունդի եզրից հետ քաշելու ճակատարհային բարտեգի:

«Փոխարենը մենք ականատես եղանք

ուժային մարմինների կողմից ապօրինաբար ընդդիմության դեմ բռնաճնշումների, ընդդիմադիր ակտիվ գործիչների բնակարաններում և ընդդիմության շտաբներում անհիմն խուզարկությունների ու ձերբակալությունների, ակտիվիստների և շտաբի անդամների փողովում և ընտրությունների օրն ընդդիմության աշխատանքի խոչընդոտման բազմաթիվ աղաղակող դեպքերի, ինչպես նաև իշխանության կողմից վարչական լծակների կիրառմամբ ընտրողներին ակնհայտ ուղղորդման դեպքերի», - ասված է հաղորդագրության մեջ:

«Պատիվ ունեմ»-ը նաև համոզմունք է հայտնում, որ իրական ընդդիմադիր դաշ-

տը պետք է ընդունի իր սխալներն ու բացթողումները: Քաղաքական ուժի կարծիքով՝ ընտրությունների գնալը հետպատերազմյան շոկային և երկրում ստեղծված ճգնաժամային իրավիճակում սխալ էր, բայց ավելի մեծ սխալ է անհաջողության ողջ բեռը հասարակության վրա բարդելը:

«Պայքարը շարունակվելու է: Մենք իրավունք չունենք մեր պետության ինքնիշխանությունը զիջած և ժողովրդին մոլորեցրած ազգադավերին թողնելու մեր պայքարի սրբազան հողն ու մեր զավակների թանկ ապագան», - ասված է հաղորդագրության մեջ:

Դաշինքը շտրկակալություն է հայտնում իրենց օգտին քվեարկած բոլոր հայրենակիցներին՝ վստահեցնելով, որ նրանց սպասելիքներն ու հույսերը լինելու են իրենց հետագա որոշումների հիմքում:

ԱՊՀ դիտորդները չեն արձանագրել այնպիսի խախտումներ, որոնք կարող են ազդել ընտրությունների արդյունքների վրա

ԱՊՀ դիտորդական առաքելությունն արձանագրել է, որ ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններում չեն եղել այնպիսի խախտումներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

Այս մասին ասուլիսում ասաց դիտորդական առաքելության ղեկավար Իլիոմ Նեմատովը:

Նեմատովը հիշեցրեց, որ դիտորդական առաքելության կազմում եղել է 96 անձ: Նա վստահեցրեց, որ կազմում եղել են փորձառու անձինք, պատգամավորներ, ներկայացուցիչներ՝ Բելառուսից, Ղազախստանից,



ԱՄՆ-ն կոչ է արել հարգել ՀՀ-ում ընտրությունների արդյունքները

ԱՄՆ-ն շնորհավորում է Հայաստանի ժողովրդին՝ հունիսի 20-ի ընտրությունների կապակցությամբ, ասված է ԱՄՆ Պետության պարտավորությունների կապակցությամբ Լեո Փոլայի հայտարարության մեջ:

«ԱՄՆ-ն շնորհավորում է Հայաստանի ժողովրդին՝ հունիսի 20-ին կայացած խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ: Մենք ողջունում ենք դիտորդական առաքելության կողմից ընտրությունների ընդհանուր դրական գնահատականը: Ուրախ ենք, որ դիտորդական առաքելության նախնական գնահատականով, ըստ որի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները հիմնականում հարգվել են, ընտրապարհի մասնակիցները հնարավորություն են ունեցել ազատ քարոզչություն իրականացնել, որակյալ է գնահատվել նաև ընտրությունների օրվա ձայների հաշվարկը:

Մենք կհսում ենք դիտորդական առաքելության մտահոգություններն ընտրությունների մասնակից կուսակցությունների շրջանում բնեռացման և կոպիտ

հռետորաբանության վերաբերյալ: Կոչ ենք անում կողմերին հարգել ընտրությունների արդյունքները վավերացվելուց հետո, և գործի դնել ընտրությունների բողոքարկման օրինական գործընթացները՝ խուսափելով քաղաքական հաշվեհարդարից, բանգի Հայաստանը շարունակում է իր ուղին դեպի ինքնիշխան, ժողովրդավար, խաղաղ և բարեկեցիկ ապագա:

Միացյալ Նահանգները միտված է ամրապնդել գործընկերությունը Հայաստանի հետ՝ հիմնվելով ընդհանուր ժողովրդավարական արժեքների վրա: Մենք ողջունում ենք Հայաստանի առաջընթացը բարեփոխումների և կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում և կոչ ենք անում շարունակել այդ ուղին՝ 2018 թվականի զարնանը հայ ժողովրդի արտահայտած իրենցին համապատասխան: Բոլոր կողմերին կոչ ենք անում հարգել օրենքի գերակայությունը և ժողովրդավարական սկզբունքները: Հույս ունենք համագործակցել նոր կառավարության հետ՝ երկկողմ հարաբերությունների և համագործակցության զարգացման համար», - ասված է հայտարարության մեջ: //

Եվրամիության խոսնակի հայտարարությունը արտահերթ ընտրությունների վերաբերյալ

«Հունիսի 20-ին Հայաստանում կայացան արտահերթ խորհրդարանական ընտրությունները: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՅՄԻԳ) ընտրությունների դիտորդական առաքելության նախնական գնահատմամբ՝ ընտրությունները եղել են մրցունակ և, ընդհանուր առմամբ, կառավարվել են պատշաճ կերպով կարճ ժամանակահատվածում: Ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, և հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ընդհանուր առմամբ, հարգվել են: Մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել: Զվեարկության օրը՝ ներառյալ ձայների հաշվարկը, ընդհանուր առ-

մամբ գնահատվել է դրական:

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ դիտորդական առաքելությունն, այդուհանդերձ, ընգծել է քարոզչության բացասական տոնայնությունը և հիմնական մրցակիցների շրջանում անձնավորվածությունը խոչընդոտել են քաղաքականության շուրջ կենտրոնացված քննարկումների անցկացմանը: Առաքելության ընդգծմամբ՝ ընդհանուր առմամբ, քարոզարշավի ողջ ընթացքում կանայք եղել են հետին պլանում:

Դիմում-բողոքները կամ հայցադիմումները պետք է մանրակրկիտ և արդյունավետ եղանակով քննության առնվեն՝ կիրառելով Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված համապատասխան ընթացակարգերը:

Եվրոպական միությունը հավատարիմ է Հայաստանի կայուն, ժողովրդավարական և բարեկեցիկ ապագայի կերտման գաղափարին:

Մենք ակնկալում ենք սերտ համագործակցություն Հայաստանի բոլոր հաստատությունների, այդ թվում՝ Նորընտիր խորհրդարանի և կառավարության հետ: Մենք կոչ ենք անում բոլոր քաղաքական ուժերին միավորել ջանքերը և համատեղ աշխատել՝ արդյունավետ կերպով հարթահարելու Հայաստանի առջև ծառայած մարտահրավերներն՝ ի նպաստ Հայաստանի: Եվրոպական միությունը պատրաստ է էլ ավելի ամրապնդել ԵՄ-Հայաստան երկկողմ հարաբերությունները և աջակցել Հայաստանին՝ կյանքի կոչել երկրում կարևոր բարեփոխումների իրականացման օրակարգը՝ հիմք ընդունելով ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի միջոցով սահմանված համատեղ պարտավորությունները»:
22.06.2021

Կոչ ենք անում բոլոր ուժերին ընդունել ընտրությունների արդյունքները. Եվրախորհրդարանի պատվիրակության ղեկավար



Եվրոպական խորհրդարանի շարավային Կովկասի հետ հարաբերությունների պատվիրակության ղեկավար, պատգամավոր Մարինա Կայուրանոյը և Հայաստանի հարցով հիմնական զեկուցող, պատգամավոր Անդրեյ Կովալենցը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ կապված Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունների հետ:

Հայտարարությունում ասվում է. «Երեկ Հայաստանում տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Մենք շնորհավորում ենք հայ ժողովրդին ժո-

ղովրդավարության այս կարևոր դրսևորման համար՝ չնայած բարդ իրավիճակին:

Սա Հայաստանի համար առանցքային պահ է, և մենք հուսով ենք, որ ընտրությունների հստակ արդյունքները նոր դրական էջ կբացեն երկրի համար:

Շատ զգացմունքային արշավից հետո հայ հասարակությունն ամենաշատը կարիք ունի վերականգնել միասնությունն ու համախմբվել ընդհանուր նպատակի շուրջ՝ ավելի լավ ապագա կերտելու համար:

Համավարակի հետ կապված ճանապարհորդական սահմանափակումների պատճառով Եվրախորհրդարանը չկարողացավ դիտորդներ ուղարկել: Այնուամենայնիվ, ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն են իրականացրել ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՅՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ՎԿ) և Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՎԿ): Մենք ընդգծում ենք, որ առաքելությունը հայտնել է, որ ընտրությունները մրցակցային են եղել և, ընդհանուր առմամբ, լավ կազմակերպված: Ընտրողներին ընձեռվել են լայն տարբերակներ, և հիմնարար իրավունքներն ու ազատությունները հիմնականում հարգվել են:

Մենք կոչ ենք անում բոլոր քաղաքական ուժերին ընդունել ընտրությունների արդյունքները և գերծ մնալ պառակտիչ հռետորաբանությունից և գործողություններից: Անօրինականությունների վերաբերյալ ցանկացած մեղադրանք չպետք է օգտագործվի լարվածությունը խթանելու համար, այլ անհրաժեշտ է դրանք կարգավորել համապատասխան բողոքների և բողոքարկման ընթացակարգերի ներքո:

Մենք ակնկալում ենք աշխատել նորընտիր Ազգային ժողովի հետ ԵՄ-Հայաստան հարաբերությունների հետագա զարգացման ուղղությամբ՝ ի շահ մեր քաղաքացիների»:
22.06.2021

Ղրղաստանից, Մոլդովայից, Ռուսաստանից, Տաջիկստանից, Ուզբեկստանից, ինչպես նաև ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովից, ՀԱԴԿ միջխորհրդարանական վեհաժողովից, ռուս-բելառուսական միությունից: Դիտորդները եղել են 700 ընտրատեղամասում:

Նեմատովի գնահատմամբ՝ ընտրությունները սկսվել են առանց իրարանցման, աղմուկի, ընտրատեղամասերը բացվել են ժամանակին՝ 08:00-ին: Դիտորդները միասին պատրաստել են վերջնական փաստաթուղթ՝ արդյունքների վերաբերյալ:

«Ընտրությունների գործընթացն անցել է Ընտրական օրենքի պահանջներին համապատասխան: Դիտորդները չեն արձանագրել այնպիսի խախտումներ, որոնք կարող են ազդել ընտրությունների արդյունքների վրա», - ասաց Նեմատովը:

Նա նշեց նաև գործընթացի բարձր կազմակերպչական մակարդակի մասին: Նեմատովի խոսքով՝ ընտրությունները կազմակերպվել, անցկացվել են ՀՀ սահմանադրության ու Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան: Առաքելության ղեկավարն ամենակարևորը համարեց այն, որ ընտրություններին մասնակցել է 25 քաղաքական ուժ: Ըստ նրա՝ դա Հայաստանի ընտրողներին ընտրության հնարավորություն է տալիս:

Դիտորդների խոսքով՝ թերացումներ եղել են, սակայն դրանք համակարգային բնույթ չեն կրել: //

Իրանը Հայաստանին շնորհավորել է հաջող ընտրությունների կապակցությամբ



Իրանի արտգործնախարարությունը շնորհավորել է Հայաստանում խորհրդարանի արտահերթ ընտրությունները հաջող անցկացնելու կապակցությամբ՝ հույս հայտնելով ընդլայնել երկու հարևան երկրների բարեկամական հարաբերությունները՝ փոխանցում է իրանական «Թասնիմ» գործակալությունը:

Հրապարակված հայտարարության մեջ Իրանի արտգործնախարարության խոսնակ Սայիդ Խաթեբազադեն հայ ժողովրդին ու հաղթած խաղաքական ուժին շնորհավորել է խորհրդարանի արտահերթ ընտրությունների հաջող անցկացման կապակցությամբ:

ԱԳՆ խոսնակը հաղթող ուժին հաջողություն է մաղթել Հայաստանի զարգացման, երկրի ներսում կայունության և տարածաշրջանում խաղաղության հաստատման ուղղված ջանքերում:

Խաթեբազադեն Թեհրանի համար կարևոր է համարել Երևանի հետ հարաբերությունների խթանումը:

Խոսնակը հույս է հայտնել, որ Հայաստանում նոր խորհրդարանի և կառավարության ձևավորումը կհանգեցնի երկու հարևան երկրների միջև բարեկամական կապերի ընդլայնմանը: //

Հավերժ փառք Արցախյան պատերազմում Նահատակված հայոց քաջորդիներին



Արմեն Առաքելյան. Նահատակված քաջարանցի կամավորականը

Առաքելյան Արմեն Ալիքի. ծնվել է 1996 թ. սեպտեմբերի 25-ին Քաջարան քաղաքում: Սովորել է Քաջարանի թիվ 2 դպրոցում, Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական թելեոլիմպիկ ընդունվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ: 2015թ. զորակոչվել է բանակ, ծառայել Մատաղիսում Թալիշում:

Ապրիլյան պատերազմի ժամանակ Արմենը ժամկետային զինծառայող էր Թալիշում, հենց այն զորամասում, որն առաջինն էր հանդիպել թշնամուն, կռվել ու խաղաղություն պարտադրել: Ապրիլյան պատերազմի ժամանակ ցուցաբերած քաջության համար Արմենը պարգևատրվել է «Արիության» մեդալով:

2017 թ. զորացրվել է եւ անմիջապես աշխատանքի անցել Չանգեզուրի պղնձամուխրդենային կոմբինատում՝ անվտանգության աշխատակից, ուսումը շարունակել է հեռակա եւ ավարտել 2020 թվականին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. Արմենը կամավորագրվեց սեպտեմբերի 28-ին եւ մեկնեց Արցախ, օրեր անց Արցախ է մեկնել Նաեւ նրա ավագ եղբայրը:

Մայրն արցունքից խեղդվող ձայնով հիշում է, որ զինկոմս իրեն առաջարկել էր որդիներին մեկնել հետ պահել, բայց ինքն ընտրություն անել որդիների միջև չէր կարող. «Երբ մեր տան մոտ հավաքված բազմությունը տեսա, հասկացա, որ որդիներինս մեկին ինչ-որ բան է պատահել. քիչ անց իմացա, որ իմ փոխարեն ճակատագիրն էր ընտրություն կատարել ու ընտրել էր Արմենին, իմ կարգապահ, մաքրասեր, հարգալից որդուն, իմ կրտսեր տղային...»:

Արմենը ռազմաճակատի հարավում միացել է Քյարամ Ալյանի անունը կրող եզդիական ջոկատին, ջոկատի հրամանատար Ռզգոն նրան զգուշացրել է կարգապահական բացառիկ պահանջների, իր ջոկատում ընդունված զինվորական խիստ կարգապահության մասին, ի պատասխան Արմենն ասել է, որ հենց կարգապահությունն ու կազմակերպվածությունն են իրեն գրավել այդ ջոկատում:

Մի բանի օր անց վերադարձել է Քաջարանից վերցրել իրենց «Կիլիսը» եւ վերադարձել ռազմաճակատ. ակնատեսները պատմում են, որ նրան կարելի էր տեսնել ռազմաճակատի տարբեր հատվածներում, զարմանալիորեն հասցնում էր թե՛ վիրավորներին տեղափոխել, թե՛ սնունդ ու ջուր հասցնել, թե՛ ռազմամթերքով ապահովել ընկերներին:

Հոկտեմբերի 13-ին թշնամու անօդաչուն հարվածում է հայ մարտիկների մի խմբի. Արմենը նրանցից բավականաչափ հեռու էր գտնվում, բայց սրտին դիպած մատնաչափ բեկորը դառնում է նրա կյանքի ընդհատման պատճառ:

Արցախի պաշտպանության համար կյանքը չինայած Արմեն Առաքելյանը պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով՝ հետմահու:



Արմեն Յարյապետյան. Արցախում ընկած մեղրեցի դիպուկահարը

Արմեն Գրիգորի Յարյապետյան. ծնվել է 1987 թ. օգոստոսի 30-ին Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում: Սովորել է Մեղրու N 2 միջնակարգ դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Մատաղիսում: Ամուսնացած էր, ունի 2 դուստր:

2009 թ. պայմանագրային ծառայության է անցել Մեղրու գնդում՝ որպես դիպուկահար: Արմենը դիպուկահարի իր գործ-ծառայությունը հրաշալի էր կատարում, ծառայակից ընկերները նրա մասին անթաքույց ցավով են խոսում. «Արմենի մասին միայն լավ կարող ենք ասել, ընտանիքին ու ընկերներին նվիրված, խելացի տղա էր, հարգանքով, հարեւանսեր, աշխատասեր...»:

Կիևը կտրված է, ամուսնու մասին խոսելը ծանր է նրա համար, երեխաներից ավագը, ով դեռ 7 տարեկան էր չկա, ամեն օր հայրիկին է սպասում. փոքրիկը կարծում էր, թե շատ ծյուն է եկել, դրա համար հայրիկը չի գալիս դիրքերից, հիմա արեւ է ու եմիլին չի հասկանում, թե ինչու հայրիկը չի գալիս, հետեւում է զինվորական մեքենաների շարքին եւ ուշադիր զննում յուրաքանչյուր իշնող զինվորականի, երբ տեսնում է, որ վերջինս իջավ, տիրում է. «Ուրեմն՝ պապաս էս մեկով էլ չեկավ...»:

Արմենն իր ծառայության մասին երբեք ոչինչ չէր պատմում: Կիևը գիտեր միայն, որ ամուսինը դիպուկահար է, նույնիսկ տեղյակ չի եղել, որ ամուսինը ոչ թե Մեղրուն մոտ գտնվող դիրքերում է, այլ՝ Արցախում:

Արմենը տուն էր գանգահարել հոկտեմբերի 5-ին, խոսել երեխաների հետ, ավագ դատերը խորհուրդ տվել՝ անապայման լավ տվորել ու միշտ լսել մայրիկին:

Ավանդ, խոսակցությունը դարձել էր վերջինը, խոսելուց ժամեր անց ընկել է քաջ հայորդին...

Արմեն Յարյապետյանի աճյունն ամփոփված է Մեղրու գերեզմանատանը:



Կրոյր Անտոնյան. գիտակցված մահն անմահություն է

Անտոնյան Կրոյր Սիմոնի. ծնվել է 1977 թ. փետրվարի 3-ին Քաջարան քաղաքում: Երեք տարեկանում տեղափոխվել է Գորիս, մեծացել տատի ու պապի մոտ՝ դառնալով նրանց մխիթարությունը: Միջնակարգ կրթությունը ստացել է Գորիսի թիվ 3 դպրոցում: 1993 թ. ընդունվել է Գորիսի գյուղատնտեսական: 1995 թ. զորակոչվել է հայոց բանակ:

Աշխատանքային ուղին սկսել է Գորիսի

տրանսպորտի Քաջարանի մասնաճյուղում՝ համակարգչային օպերատոր, այնուհետեւ՝ փրկարար է աշխատել Քաջարանի ԱԽ-ում:

2001 թ. ամուսնացել է՝ ունի 2 երեխա: Կիևը Կրոյրին բնութագրող բառեր դժվարությամբ է գտնում. «Օրինակելի ամուսին ու հայր էր, նրա բնավորության լավագույն գծերից էին կարգապահությունն ու աշխատասիրությունը, որոնք մեր ընտանիքի հաջողությունների հիմքն էին: Մենք լավ երեխաներ ենք մեծացրել՝ խելացի, հարգալից, լավ ընտանիք ունենեք, հիմա էլ ունենեք, բանի որ մեր օրը լցված է Կրոյրի մասին հիշողություններով, նրա հիշատակը վառ է, բայց կորստի ցավը՝ սարսափելի մեծ»:

2007 թ. աշխատանքի է անցել Չանգեզուրի պղնձամուխրդենային կոմբինատում՝ երթակարգավար: Կրոյրի աշխատանքային ընկերները նրան ներկայացնում են որպես հարգալից մարդու, ով իր անձնային բարձր հատկանիշների շնորհիվ արժանացել էր փոխադարձ հարգանքի:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. հաջորդ օրը Կրոյրն Արցախում էր, մասնակցել է Կարանդայի /Ֆիզուլի/ եւ Ջրականի /Ձաբրայի/ մարտերին:

«Յեռոսաբար էր կռվում, հերոսաբար էր ընկավ, քչերն են հայրենիքը պաշտպանելու գնում գիտակցաբար, Կրոյրը քչերից մեկն էր»:

Հոկտեմբերի 13-ին Կրոյրը վտանգավոր մարտական գործողությանը մասնակցել է կամավոր, որպեսզի հանձնարարությունը ժամկետայինները չկատարեն: Կրոյրը գիտակցել է վտանգի չափը, գիտակցաբար ինքն է կատարել հանձնարարությունը եւ հերոսաբար անմահացել:

Կրոյր Անտոնյանի մարմինն ամփոփված է Քաջարանի գոհված ազատամարտիկների պանթեոնում:



Աշոտ Բաբայան. նրանց երջանկությունը կիսատ մնաց

Աշոտ Մանասերի Բաբայան. ծնվել է 1983 թ. դեկտեմբերի 15-ին Շաղատ գյուղում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է հայոց բանակ: Շաղատը հայտնի է իր բնակիչների աշխատասիրությամբ, Աշոտն էլ, զորացրվելուց հետո, զբաղվում էր իր տունն ու գյուղը սեփական քրտինքով շենացնելու գործով: Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

2016 թ. պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում: Աշոտ Բաբայանի ունակություններն ու աշխատանքին նվիրվածությունը հաշվի առնելով՝ հրամանատարական կազմը նրան ուղարկել էր սերժանտական դասընթացների մասնակցելու, որոնց ավարտից հետո շարունակել է ծառայությունը՝ որպես պայմանագրային սերժանտ:

2013 թ. ամուսնացել է Անահիտի հետ: Յամերաջի, աշխատող, ստեղծող ընտանիքի համբավ ունի Աշոտի ընտանիքը Շաղատում:

Յամագյուղացիները, որ փոքրիկ գյուղից Արցախյան երրորդ պատերազմում երեք հերոս են հողին հանձնել, Աշոտի ու Անահիտի մասին պատմելու արցունքները չեն զսպում՝ «Լավ տղա էր, լավ ընտանիք են, ջանել էին, երեք երեխա ունեն, էլ երեխեքը անհայր ո՞ւց են մեծանալու, բանի կին այրիացավ, բանի հոգու երջանկություն կիսատ մնաց...»:

2020 թ. սեպտեմբերի 27. Արցախն էլի թշնամու առաջ մենակ էր, էլի պաշտպանության ու փրկության կարիք ուներ. Աշոտը մեկնում է Արցախ՝ գնում է կռվելու, իր տան դուռը, պապերի հողն ու զավակների ապագան պաշտպանելու:

Կռիվ էր՝ անհավասար, դաժան. տուն գանգահարելիս Աշոտը հույս էր տալիս, ասում, որ ամեն ինչ լավ է լինելու, որ չնայած դժվարություններին, իրենք կարողանում են կատարել իրենց գործը:

Հոկտեմբերի 10-ին թշնամու անօդաչուի հարվածից այրվում է Կարմիր Շուկայից Ջաբրայի զինծառայողներ տեղափոխող բեռնատարը. զոհվում է Աշոտ Բաբայանը...

Հուղարկավորվել է հոկտեմբերի 28-ին Շաղատի զինվորական պանթեոնում:



Հովհաննես Գրիգորյան. մասնագիտությունը՝ հայրենիքի պաշտպան

Հովհաննես Կառլենի Գրիգորյան. ծնվել է 1995 թ. հոկտեմբերի 28-ին Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում: Բարձր առաջադիմությամբ ավարտել է Սիսիանի ավագ դպրոցը եւ ընդունվել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտ, զուգահեռ վերապատրաստվել է Արմենակ Սանփերյանցի անվան ավիացիոն ինստիտուտում, որն ավարտելուց հետո ծառայության է անցել ԱԳ ԳՐ զորամասում՝ որպես ռադիոդասակի հրամանատար:

Ծառայության ընթացքում վայելել է թե՛ ծառայակից ընկերների, թե՛ ավագ սպայակազմի, թե՛ ենթակամների սերն ու հարգանքը: Նրա մասին ընկերներն ակնածանքով են խոսում, նաեւ հպարտությամբ՝ «Յեռոս բառը վերջերս շատ է օգտագործվում, այ Յովհաննեսի մասին կարող ենք ասել, որ իրական հերոս էր, մարդ, ում հայրենասիրության, ծառայության ու կարճատեւ կյանքի մասին արժեք է պետք է ֆիլմ նկարահանել...»:

2020 թ. սեպտեմբերի 27-ին լույսի հետ պայթեց պատերազմը. Հովհաննեսը Եղնիկներում էր՝ կատարում էր ծառայությունը, ինչպես միշտ՝ գերազանց, անդադար եւ առանց հանգստի: Նա լինում էր այնտեղ, ուր վիճակը ծանր էր, ինչպես ծառայակից-մարտական ընկերներն են պատմում, Հովհաննեսն ամեն վայրկյան պատրաստ էր ցանկացած հանձնարարության, պատերազմի օրերին եղել է Մատաղիսում, Ադրամում, Արցախի հարավային հատվածում:

Պատմում են, որ տանկերից մեկը վթարվել էր մնացել էր մարտադաշտում, Հովհաննեսը մի ընկերոջ հետ մտել է մարտադաշտ՝ մեկ օրից ավել փնտրել, գտել տանկը, նորոգել են ու դուրս եկել՝ փրկելով թե՛ անձնակազմը, թե՛ տանկը...

Հոկտեմբերի 9-ին Կարանդայում թշնամու անօդաչուի հարվածից այրվում էր բեռնատարը, Հովհաննեսը շտապում է օգնության՝ օգնում է շատերին, քիչ անց լինում է երկրորդ հարվածը եւ անմահանում է ավագ լեյտենանտ Հովհաննես Գրիգորյանը. ազգը կորցնում է հավասարակշռված, բարձր մասնագիտական հմտություններով ու ամենակարեւոր՝ մարդկային բարձր որակներով օժտված հայ սպայի...

ԷՅԻ ՆՅՈՒԹԵՐԸ
ՊԱՏՐԱՍՏԵՑ ՏԻԳՐԱՆՈՒՅԻ
ԲԱՂԱՆԱՆԸ

«Մթնաձոր»-ի հերոսը



ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Աստառապետ Գանինը լավ տրամադրությամբ վերադառնում էր Գորիս: Առիթը մեկը չէր: Երկու շաբաթ առաջ, արդեն քառասունամեկ տարեկանում հայր էր դարձել: Հիմա քաղաքի ներքին թաղամասում բազմած շանգեզուրի անտառապետության շենքի երկրորդ հարկում իրեն էին սպասում կինը՝ Նատալյան, և նորածին տղան՝ Ժորժը: Երջանիկ էր ռուս մարդը: Հեռավոր հայրենիքում տեղի ունեցած հուժկու անցքերը, տեղից տեղ նետելով, հուսահատության էին հասցրել, չէր կարողանում հանգստանալ կյանքի անցնել, ընտանիք կազմել, զավակի թողնումը վերջանական: Վերջապես երազանքն իրականացել էր. իրեն տանը սպասող սիրելի կին և պաշտելի տղա կային:

Լավ տրամադրության առիթը նաև անտառամերձ գյուղերի բնակիչներից ստացված գոհունակության խոսքերն էին: Ընդհատ է՝ թափով կատարվող դպրոցական շինարարության համար գյուղերը ձրի անտառանկյալ էին ստանում, սակայն շարունակվում էին անօրինակական անտառահատումները: Մարդկանց վրա չէին ազդում ոչ հանգստ հորդորը, ոչ ակտ կազմելը և ոչ էլ ծառահատման գործիքի՝ սուր կացնի առգրավումը: Ստիպված էին դիմել խախտումների:

— Մենք էլ մարդ ենք, մեզ էլ տուն կառուցելու համար տախտակ ու գերան է հարկավոր, վառելու համար՝ փայտ, - տրտնջում էին գյուղացիները:

Այդ արդարացումով էլ շարունակվում էին թաղամաս մտնել անտառ և շտապելուց հատում անգամ դեռ չհատվածք մատող ծառերը: Իսկ դա ցավալի հարված էր բնությանը: Չանգեզուրի գավառի անտառապետ Նշանակվելուց հետո Գանինը տեղեկացավ մարդկանց դժգոհությունից, զբաղվեց խնդիր լուծումով և հասավ նրան, որ Հայաստանի Ժողովուրդի վերջերս որոշում էր կայացրել հաջորդ տարում 3000 խորանարդ մետր ծառահատման համար: Գյուղացիները շնորհակալ էին, որ արդեն կարող են անտառ մտնել՝ օրինական տոմսակը ձեռքին, և հատել մասնագետի կնքած հատում ծառերը, և գոհունակությունն արտահայտում էին ռուսերեն երկու բառով՝ «Спасибо, брат»:

Անտառապահը շտապում էր ժամ առաջ հասնել իրեն հայր դարձած կնոջն ու տղային: Ջորիներով Կապանից եկող երեք գյուղացիներից նա առաջ էր անցել: Չգաց, որ հեռավոր հայրենիքից բերած մի մեղմանուշ մեղեդի է շրյում հոգին, և կարողով հիշեց այնտեղ մնացածներին: Սկաթույր ձին, առանց սանձահարելու, հանգստ առաջանում էր Որոտանի խորածորին կախված գանդիթի կանչի ծանոթ կեանքներով: Որսաշունը մեկ կորչում, մեկ էլ հաջոցով դուրս էր նետվում մացառների միջից տեղահան անելով շիկամեջք մի նապաստակ կամ սևափետուր ու դեղնատոփի մի մոշահավ, բայց կրակոց չէր լսում և զարմացած նայում էր տիրոջը: Իսկ անտառապետը տրամադիր չէր օրսի, քանի որ ձիու թամբին արդեն կապած ուներ մի նապաստակ ու մի փուխ կաբալ: Տերևաթափ այոճենու և մասրի կարմրակ թփերին չարդեր էին աղվում: Հետիտն ձորն իջնող երկու տղամարդ, հանդիպելով կանաչ տարագով ու կոկարդավոր գլխարկով ձիավորին, լեռնցիների սովորությամբ, փափախները հանելով բարևեցին հարգվող մարդուն, որը պատասխանեց

«Привет, братцы» բառերով:

Անհար էր, որ հին քարավանային ճանապարհով անցնողի աչքն ու ակնաչքը անտարբեր մնային հանդիպակաց՝ իրար հետ հավերժական խոսք ու գրոցի կանգնած ամպահում քարափների ու մթանած անտառների լոյմբերյան երկնքից ծեփծեփումներին: Հիմա խորածոր անգաստանին իշխում էին Որոտանի վշտոցն ու տերևաթափի խշխշոցը: Ուղևորի մտքով անցավ, որ նախաստեղծ գործությունը՝ մարդուն որպես պարզ, բազմաձև է կերտել աշխարհը, որ միաձուլությունից չներկհի հոգին: Այ, իր ծննդավայրը՝ Նեղգայի նահանգում էլ է հիմա տերևաթափ, սակայն այլ ներկայանակով և առանց քարեքար զարկվող գետի շառաչի: Այնտեղ, եթե նայես առաջ, հայացքը տափաստանի ու մշտադալար անտառների վրայով, առանց արգելի կզնա դեպի հորիզոնի անսահմանություն: Իսկ այստեղ՝ Չանգեզուրում, առաջ նայողի հայացքը կարծ տարածության վրա դիպչում է որևէ սարի և բեկվում դեպի տիեզերքի խորքը: Ուրեմն, այնտեղ մարդը սովոր է անսահմանությանը, այստեղ՝ տիեզերական խորությունը:

Ուր որ է՝ հին քարավանային ճանապարհը կմտներ քաղաք, որ մի լուսավոր անկյուն էր հեռավոր լեռներում: Կես դար առաջ դարձել էր ռուս գավառապետի նստավայր, որը կազմել էր սովոր գյուղի հատակագիծը, որը հիմա աչք էր շոյում ձորի վերից վար ձգվող գուգահեռ փողոցներով, կառուցապատված՝ քարե պատերով մեկ և երկու հարկանի տներով, որոնք կից ունեին պարտեզներ: Եզակի էր Գորիսը նաև նրանով, որ էլեկտրական լուսավորություն ուներ, փոստային կապ՝ Երևանի, Շուշիի և Նախիջևանի հետ: Ամռանն էլ առաջին ավտոմեքենան էր մտել քաղաք:

Որսաշունը չէր երևում, նա արդեն տուն հասած կլիներ: Առջևում երևացին հին Գորիսի ժայռաբլուրները և «քար գրակնը» գարմախի քարե սյուները, որոնց խորշերում վաղուց բնակություն էին հաստատել մարդիկ, և այժմ էլ ապրում էին նրանց սերունդները: Այդ քարայրներից մեկում ապրող ընտանիքներից մեկին անտառապետը հյուր էր եղել իր ընկեր, գավառի գլխավոր հողաշինարար Ալեքսանդր Բակունցի բարեկամի տանը և արժանացել չէր ընդունելության, ստացել նվեր՝ բազմագույն բրդաթելերից հյուսված տաք գուլպաներ:

Անտառանտեսության բազմ հասնելու հետ շենքից դուրս եկավ հերթապահը, որին Գանինը հանձնեց ձիու սանձը և արագ բարձրացավ երկրորդ հարկ: Սենյակի լույսը վառվում էր: Ինչո՞ւ, չէ՞ որ դեռ լույս էր: Երբ մտավ ու մի պահ քարացավ: Նատալյան, սեղանի մոտ նստած, արցունքի մեջ էր: Ի՞նչ էր պատահել, գուցե տղայի՞ հետ... Մովսես դեպի օրորոցը, փառք Աստծո, ժորժը հանգստ քնած էր:

— Նամա, այս ի՞նչ բան է, ինչո՞ւ ես լացում, կարո՞ղ է՞ վատ լուր ես ստացել Թիֆլիսից, - հարցրե՞ր տեղաց ամուսինը, - դե՞...

Լացը շարունակելով՝ Նատալյան դեպի ամուսինը հրեց սեղանին փռված լայնալանջ թերթը:

— Այ, սրա համար եմ լացում: Քո սիրելի ընկեր Ալեքսանդր Բակունցը, վերջերս թերթերում տպագրվող ակնարկների տակ Ակսել է ստորագրում, իր այս պատմվածքում թեզակից մի հրե է կերտել: Բացի թեզակից՝ Գորիսում հայերեն կարդացողները հիմա հասկացել են, որ նրա՝ հոգով այնանդակ հերոսը դու ես...

Կնոջ առջև փռված թերթը Գանինը բազմիցս էր տեսել: Գիտեր նաև անունը, որը ռուսերեն գրված էր առաջին էջի վերին ձախ անկյունում՝ «Хорьгаин Айастан»: 1926 թվի լոյմբերի 21-ի համարն էր, որը տեղ էր հասնել երրորդ օրը: Երկրորդ էջի ներքևում, յոթ կարծ սյունակների մեջ տպված տեքստն էր սրտակեղեք լացի հասցրել կնոջը: Փաղաք շանքով հանգստացրեց նրան, սպա զբաղվեցին արթնացած փոքրիկով: Իսկ ավելի ուշ խնդրեց թարգմանությունով կարդալ «Մթնաձոր» կոչվող պատմվածքը և գրեթե ողջ գիշեր

չքնեց: Բակունցն ինչո՞ւ, իսկապես, իրենից հակամարդ էր կերտել: Մտածեց երկար և կյանքի որվազները հիշողության մեջ սահեցին շարվեշար, որոնց մասին գավառի հեռավոր վայրեր գնայիս պատմել էր որպես գրող հանդես եկած հողաշինարար ընկերոջը:

... Տասը տարեկան էր, երբ մի կտոր հաց ճարելու հույսով գնաց «մարդամեջ» երբեմն կատարելով չափազանց ծանր աշխատանքներ: Սեր դրսևորեց ուսման նկատմամբ, ավարտեց գյուղական դպրոցը, մրցույթով ընդունվեց անտառային դպրոց, մասնագիտությամբ սկսեց աշխատել Սիբիրի Տոբոլսկ քաղաքում և հնարավորություն ստացավ օգնելու ծնողներին: Առաջին աշխարհամարտի տարիներին ծառայում էր արևմտյան ռազմաճակատում: Բոլշևիկների ձեռնարկած հեղափոխությունից հետո գինակից ընկերների հետ, սպայի կարգավիճակով, 1919-ի հուլիս ամսից Կարմիր բանակի շարքերում էր: Մասնակցեց Դոնում և Հյուսիսային Կովկասում ծագած կոիվներին, սպա 11-րդ Կարմիր բանակում որպես վաշտի և գումարտակի հրամանատար, եկավ Ադրբեյջան, սպա՝ Վրաստան:

Թիֆլիսում Իգնատի Պավլովիչ Գանինը մտածում էր ծառայությունն ավարտել, վերադառալ հայրենիք և ընտանիք կազմել: Սակայն հաստատվեց այն ասույթի ճշմարտացիությունը, թե «մարդը ենթարկում է, իսկ աստված՝ կարգադրում»: Հավաքար թաղամասում, ուր բնակվում էր, մտավորականության՝ գինվորների հետ հանդիպման ժամանակ ծանոթացավ Թիֆլիսի Նշանավոր հայկական տոհմերից մեկի ավագ Ստեփան Կարայանի դստեր՝ մանկավարժական տեխնիկումի շրջանավարտ, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատալյայի հետ: Չգաց, որ այլևս չի կարող ապրել առանց հայ աղջկա: Հանդիպեցին առանձին, զբոսնեցին Գոլովիսկի պողոտայում, մտան հայկական եկեղեցի, միասին մոմ վառեցին և ներկա եղան պատարագի: Աղջիկն արձագանքեց քաջ սպայի ամուսնության առաջարկին: Ծոռուներն օրհնեցին զոյգի միությունը:

1924-ի ապրիլին շտաբային սպան գորացրվելու զեկուցագիր ներկայացրեց, բավական էր, ութ տարի կրել էր գինվորական համազգեստ, հրաման էր կատարել և ենթականերին հրամայել:

— Ընկեր Գանին, ու՞ր եք պատրաստվում տեղափոխվել, - դիմումը ստորագրելուց առաջ հարցրեց գործադիր հրամանատարը:

— Հայրենիք, Պենզա, ուր հարազատներս են: Կասկած չունեմ, որ այնտեղ էլ անմիջապես աշխատանքի կանցնեմ իմ մասնագիտությամբ:

— Գրություն ենք ստացել Խորհրդային Հայաստանի Ժողովուրդից, որը խնդրել է քաղաքացիական մասնագիտություն ունեցող զորացրվողներին աշխատանք առաջարկել Հայաստանում: Այնտեղ նաև անտառային մասնագետի կարիք կա, ի՞նչ կասեք, - հարցրեց հրամանատարը:

— Մտածել է պետք, - պատասխանեց անսպասելի առաջարկից շփոթված Գանինը: — Մտածիր և պատասխանիր արագ, - պահանջեց վերադասը:

Առաջարկը Նատալյայի սրտով էր. — Լավ առիթ է, Գեյլա, կապրեմ նախնիներիս հայրենիքում, այնտեղ չեմ եղել, ծնվել ու մեծացել եմ Թիֆլիսում: Հիմա շատ հայեր են գնում այնտեղ: Երկուսով կմասնակցենք նոր Հայաստանի կառուցմանը, դու՝ քո սիրելի անտառում ծառայելով, ես՝ իմ սիրելի դպրոցում: Հետո էլ կզնաք Թուսաստան:

Օգոստոսի առաջին օրերին Գանինները երկաթուղով հասան Լոռի, սակայն Ստեփանավանում կարճ մնացին: Դեկտեմբերի վերջին օրերին Գեյլայի Գանինին Չանգեզուրի անտառապետ Նշանակվելու առիթով ընտանիքը տեղափոխվեց Գորիս: Անտառանտեսությունն առանց դեկավարի էր մնացել, տեղացի նախկին անտառապետ Գարեգին Սայրյանի դեմ դատական գործ էր հարուցված: Գրեթե միաժամանակ գավառի գյուղատնտեսի պաշտոնով այստեղ աշխատանքի էր անցել բուն գործիցի Ալեքսանդր Բակունցը: Այս երկու տոհմերին հերթական խորհրդակցությունից հետո ծանոթացրեց գավառային գործադիր կոմիտեի նախագահ Բազրաս Յարությունյանը:

— Իգնատի Պավլովիչ, Ալեքսանդր Ստեփանիչը կարող է ձեզ լավ ուղեկցող լինել քարոզմիջավայրում և ձեզ լավ ուղեկցող լինել քարոզմիջավայրում: Այս գավառի ծանոթանալիս, մանավանդ որ՝ աշխատանքի բերումով նա հաճախ պիտի լինի և՛ հեռու, և՛

մոտ գյուղերում: Դե, գյուղերն էլ ձեզ ենթակա անտառներով են շրջապատված, համագործակցեք հանուն գավառի զարգացման:

Ապագա ընկերները ծանոթացան այսպես: Ձեռքսեղմումից հետո անտառապետն ու գյուղատնտեսը քայլեցին հրապարակում: Խարկվում կրթությունն ստացած գործիչներն լավ խոսում էր ռուսերեն, գրական ճաշակ ուներ, հիացմունքով էր խոսում ռուս գրողների՝ Գոգոլի և Դոբրոլուի մասին: Զրուցակիցներն այժմ հակիրճ ներկայացրին իրենց անձը՝ հանգամանակները թողնելով ապագային, և որոշեցին մի կողմ դնել դիմելու հարգանքի պայմանականությունը, իրար կոչել մտերիմների շրջանում ընդունված ձևով՝ Գեյլա և Ակսել: Հենց նույն օրը, ձիերը հեծած, գնացին Քարահուլի գյուղը, ուր գյուղատնտեսը հողագործների հետ գրուց պիտի ունենար կարտոֆիլի մշակության մասին: Ինչպես Գորիսի հասարակական շենքերի ճակատներին, այստեղի գյուղատնտեսի մուտքին ևս ինչ-որ կարմիր պաստառ էր փակցված: Բակունցն իր ընկեր անտառապետի համար թարգմանեց. «Անգրագիտությունը մեր թշնամին է: Կորչի անգրագիտությունը»:

— Ընկեր բուշուկները ճիշտ տեղից են սկսել իրենց իշխանության կայացումը, - թարգմանությանը հավելեց գյուղատնտեսը: — Առանց մտավոր լուսավորության՝ ոչևի չես հասնի: Սա վերաբերում է գյուղատնտեսական արտադրությանը, որը դարձրել է իջնով եկել ու կանգ է առել մի կետի վրա: Գյուղացուն անհրաժեշտ է նոր գիտելիքներ տալ: Այս հարցում մեծ է գյուղատնտեսի դերը: Մինչև այստեղ գալը, Հորհողյանտունում աշխատելիս, նախաձեռնեցի «Գյուղացու գրադարան» մատենաշարի հրատարակումը: Լավ ընդունելության արժանացան հանրամատչելի ագրոգոյցները: Այդ աշխատանքը կշարունակեմ նաև այստեղ՝ «Կարմիր ռաշապար» թերթի միջոցով: Գյուղացուն պետք է դուրս հանել մտավոր հետամնացությունից:

Առաջին անգամ ընկերները հեռավոր ուղևորության՝ դեպի Կապանի կողմերը, գնացին հունվարի վերջերին, երբ ձորերի արևահայաց լանջերին ու բամբակից պաշտպանված բացատներում ձյան մաշված ավանի տակից աչքով էին անում անհամբեր ձնծաղիկները: Այստեղ անդաստանների վրա իշխող երկնքի մեջ մխրճված Խուստուփ սարն էր, որի անմատչելի ձերպետում, իբր թե, հովազներ էին ապրում: Երկրորդ օրվա վերջում ճամփորդները հասան Բասուտա ձորում ծվարած մի փոքրիկ գյուղ: Կանգ առան անտառապահի տանը, որը եղել էր նախկին կարմիրբանակային: Գյուղամիջի հրապարակից մեկը մի բանի անգամ ձայնեց՝ կենտրոնից կարևոր մարդիկ են եկել: Արդեն երկուրյան անտառապահի ծխահար գլխատանը գրուցի էին նստել գյուղի բոլոր տղամարդիկ, որոնց տան կինը սարի խոտերով թեյ էր մատուցել, բացքերդենի փոխարեն՝ տանձի չիր: Իրեն վաղուց ծանոթ մարդկանց Բակունցը ներկայացրեց ռուս մարդուն, խոսեց գյուղատնտեսության խնդիրներ մասին և խորհուրդ տվեց հողի պակասության պայմաններում ավելի շատ զբաղվել անասնապահությամբ:

Գյուղացիները բարի գալուստ մաղթեցին հյուրերին, անտառապետի ներկայությունից օգտվելով դժգոհեցին, որ շինափայտ ունենալու համար անտառապահը թույլ չի տալիս գեղանացու ծառ հատել: Լակ պատմեցին իրենց այլ հոգսերից, և գրուցը կամաց-կամաց փոխեց ընթացքը: Մեկը մյուսին լրացնելով՝ գյուղացիներն ասացին, որ իրենց գյուղի կողքով հոսող գետի հոսանքով վեր ձորը պատված է շատ խիտ, անանգանելի անտառներով, որոնց խորքերը գնացող արահետներն առաջին ձյան հետ փակվում են և մինչև գարուն ոչ մի մարդ չէր կարող ոտք դնել այնտեղ, ուր տեր ու տիրակալ էին մարդկանց նման քայլել, պարել ու խոսել իմացող ամեհի արջերը, կատարի գայլերն ու նախահարձակ վարազները: Հաջորդ առավոտյան անտառապահը հյուրերին ուղեկցեց՝ իր պահաբաժնիները դիտելու: Գանինի մեջ խոր տպավորվեց մեծ անտառի մեջ առանձնացած կաթնագույն, ողորկ բներով, լայնատարած ճյուղերով հսկա սոսիների պուրակը: Բակունցից իմացավ, որ հեթանոս հայերն այդ ծառերի տերևների սոսափյունով մարդկանց ճակատագիրն են որոշել, սակ քրիստոնյա հայերը ծառն սիրում են Քրիստոսին հայլածանձների մասին հիր խիտ սաղարթի մեջ թաքցնելու համար:

Շարունակելի



Առաջարկվեց Դավիթ Մաթևոսյանին հետմահու ազգային հերոսի կոչման արժանացնել


մոտեցավ մի քաղաքացի, ով ներկայացավ որպես պահեստազորի գնդապետ Բագրատ Չաբարյան և առաջարկեց Դավիթ Մաթևոսյանին հետմահու ազգային հերոսի կոչման արժանացնել: Նա պնդեց, որ խնդրանքը ներկայացնում է մեղրեցիների մեծամասնության անունից և հավելեց, որ Մաթևոսյանն իր ամբողջ կյանքը նվիրել է պետականաշինությանը և երբեք ոչ մի կառավարության կողմից չի գնահատվել:

Փաշինյանն արձագանքեց՝ Դավիթ Մաթևոսյանն իր ընկերն է եղել, այն կարծիքին է, որ արժանի պարգևատրում է, սակայն չի ցանկացել նման որոշման հանգել ընկերական հարաբերության տրամաբանության շրջանակում:

«Ուզում եմ իմանաք, որ մահվանից ոչ շատ առաջ նրա հետ հանդիպում եմ ունեցել, մենք խոսակցություն ենք ունեցել՝ նրան պետական խնդիրների ներգրավման կատարման հարցով»,- ասաց Փաշինյանը: Նա շնորհակալություն հայտնեց այդ առաջարկի համար՝ ընդգծելով, որ այս պահին չի կարող ասել, թե ինչ որոշում կլինի, սակայն վստահեցրեց՝ հարցը կդիտարկվի:

«Փաշինյանն արձագանքեց՝ Դավիթ Մաթևոսյանն իր ընկերն է եղել, այն կարծիքին է, որ արժանի պարգևատրում է, սակայն չի ցանկացել նման որոշման հանգել ընկերական հարաբերության տրամաբանության շրջանակում:»

16.06.2021 Թ.



Ժորա Մանուցյանը դարձավ 80 տարեկան. շնորհավորում ենք

Լրացավ Հիսուհայր գյուղի տարեգիր ժորա Լեւոնի Մանուցյանի 80-ամյակը: Ծնվել է 1941 թվականին Գորիսի շրջանի Հիսուհայր գյուղում:

Ծննդավայրում ստացել է միջնակարգ կրթություն, այնուհետև՝ բարձրագույն մասնավարժական կրթություն:

25 տարի աշխատել է Հիսուհայրի միջնակարգ դպրոցում՝ պատմության ուսուցիչ՝ արժանանալով «Ավագ ուսուցիչ» կոչման:

Մասնավարժական ընթացումներին ակտիվ մասնակցության համար արժանացել է հանրապետական 1-ին և 2-րդ կարգի դիպլոմների:

Եղել է գյուղի և Հիսուհայրի ռեստիտե կոչիկների գործարանի կուսակցական կազմակերպության քարտուղար, Հիսուհայրի գյուղխորհրդի նախագահ: Այդպեսով հանդերձ՝ ժորա Մանուցյանը Գորիսի տարածաշրջանում հայտնի է որպես հայրենի գյուղի տարեգիր, հայրենի եզերքի պատմության անխնայ վշակ: Արդեն իսկ Հիսուհայրին նվիրված մեկ տասնյակից ավելի գրքերի հեղինակ է:

Այսօր էլ ժորա Մանուցյանը շարունակում է ամենայն պատասխանատվությամբ իրականացնել գյուղի տարեգրի իր առաքելությունը:

«Սյունյաց երկիր» խմբագրակազմը շնորհավորում է ժորա Մանուցյանին՝ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, նրան ցանկանում քաջառողջություն և հետագա ստեղծագործական հաջողություններ՝ բնօրրան Հիսուհայրի անցյալն ու ներկան լուսաբանելու գործում: //

Կապանում դասական երաժշտության կոլորիտը պահպանելու նպատակով

Դաշնակահարուհի, Կապանի արվեստի պետական բուլեջի դասախոս Լիաննա Ստեփանյանը Կապանի Արամ Խաչատրյանի անվան N 1 երաժշտական դպրոցի դասիչներին հանդես եկավ համերգով: Դաշնակահարուհին իր պարտքն է համարում հանդիսականին հանդիպել ամեն տարի՝ Կապանում դասական երաժշտության կոլորիտը պահպանելու նպատակով: Նրա անդրանիկ մենահամերգը կայացել է դեռևս 1998 թվականին: Անդրանիկ կատարումը Մոցարտի «Ռե միսոր ֆանտազիա» ստեղծագործությունն էր, որը նվիրվեց արցախյան մերօրյա պատերազմի զոհերի հիշատակին: Ջեյնին Վիվալդիի, Էրոարդ Բադալասարյանի, Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից: Զամերգային ծրագրում այս անգամ ընդգրկված էր Անտո Բաբաջանյանի ստեղծագործություններից: Զանգի տարին Բաբաջանյանի էր՝ կապված մեծ կոմպոզիտորի հարյուրամյակի հետ:

Այս անգամվա համերգի նորությունն այն էր, որ հանդես եկան Ստեփանյանի երկու աշակերտները, ինչպես նաև մի ստեղծագործություն (Բաբաջանյանի «Նուկոյուրն») կատարեց դաշնակահարուհի Յանա Ստեփանյանի հետ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Արցախցիները պահանջում են Արայիկ Ջարոյությունյանի հրաժարականը

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում մի շարք քաղաքացիներ իրականացրել են բողոքի ակցիա՝ պահանջելով, որպեսզի Արցախի նախագահ Արայիկ Ջարոյությունյանը ներկայացնի հրաժարական: Ակցիա իրականացնող քաղաքացիներից մեկն ընդգծեց, որ Ստեփանակերտի հրապարակում քաղաքացիների այն քիչ մասն է, որը կարծում է, որ Արայիկ Ջարոյությունյանը պետք է հրաժարական ներկայացնի:

«Արցախցիները հիշում են կարող շնորհավորել: Մենք չենք հետապնդում որևէ քաղաքական նպատակ, որևէ քաղաքական ուժ սա չի կազմակերպել: Ժողովուրդը եկել է ասելու, որ Արայիկ Ջարոյությունյանը պետք է հեռանա և թողնի իր գրված է «Յեռանցի, քանի որ դուք չեք արտահայտում արցախցու տեսակետը»,- ասաց քաղաքացի:



ցին: Ըստ ակցիայի մասնակիցների՝ իշխող ուժը որոշումներ է կայացնում և մարդկանց կանգնեցնում փաստի առաջ: «Ցավոք, մեր սիրելի Արցախի տարածքները գտնվում են թուրքերի վերահսկողության տակ, քանի որ կապիտուլյանտ Լիլյու

Փաշինյանը, Արցախի ոչ բարով կապիտուլյանտ Արայիկ Ջարոյությունյանը պլանավորված ձևով 44-օրյա պատերազմի ընթացքում ամեն օր ստել և խաբել են Արցախի ժողովրդին՝ վստահեցնելով, որ ամեն ինչ լավ է», - նշել է բողոքի ակցիայի մասնակիցներից մեկը: 21.06.2021

Շատերից մեկը. Գորիս քաղաքի Յուրի Բախշյանի անվան հիմնական դպրոցի 9-րդ «ա» դասարանում վերջին գանգի հանդիսություն էր

Սիրելի դպրոցի հրաժեշտ տվեցին երեւոներկու աշակերտ:

Եվ այդ կապակցությամբ հունիսի 17-ին կազմակերպվել էր ցերեկույթ:

Յուրի Բախշյանը էին ոչ միայն հիմնական դպրոցի շրջանավարտները: Յուրի Բախշյանը էր նաև դասուցել Լիաննա Գորիզոյանը, ով չքաբքեց բաժանումի տխրությունը, արդեն իսկ սկիզբ առնող կարոտը: Եվ, այդուհանդերձ, հրաշալի մաղթանք ուներ իր սաներին՝ «Խաղաղ երկինք, երազանքների իրականացում»:

9-րդ դասարանիցներին հրաժեշտ տալու էին եկել ծնողները, դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանյանը, դասավանդող ուսուցիչները՝ Արդա Անտոնյան, Սիրուշ Բաղդասարյան, Սոնա Ջարոյությունյան, Ռուզաննա



Խաչատրյան, Լիլիթ Սարգսյան, Ավարդ Ալեքսանյան, Մարգարիտա Պետրոսյան, Մարիամ Ջարոյությունյան, Արեւիկ Սաֆարյան, Արմանուշ Բակունց, Լիլա Բաբալարյան, Արթուր Գրիգորյան, Ռոբերտ Արզումանյան, Անուշ Դադունց: Յուրի Բախշյանը, որը յուրօրինակ էր բարձրաճաշակ գրական-երաժշտական միջոցառում էր, կարծում էր, ընդմիջտ կմնա երեխաների հիշողության մեջ:

Դպրոցականների, ուսուցիչների ծնողների առջև ելույթ ունեցան դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանյանը, «Սյունյաց երկիր» խմբագիր Սամվել Ալեքսանյանը: //

Սյունյաց Երկիր
3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթություն ներկայացնել մեքենագիր վիճակում:
Թղթած տպագրվում է «Տղթան Մեծ» հրատարակչության տպարանում: Չստացնել՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպարանակալը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 24.06.2021թ.:
Հոլմը «Սյունյաց երկիր» պարտադիր է: Նշանի տակ տպագրվում են գրվածային կրթություն: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
«ԳՐՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում